

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.01.2021թ. թիվ 2112131931 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 01 >> 02 2021թ. 7-13- 997

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Լուսինե Խեդոյանի ՄԴ/3459-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4 թաղամասի 23 շենքի 8 բնակարանի բնակիչ Լուսինե Խեդոյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112131931 որոշումը՝ նշելով, որ իրավախախտման պահին գտնվել է մեքենայի մեջ, սպասել է մինչև երկու ընդամենը, որպեսզի դիմացի տրանսպորտային միջոցը դուրս գա և կայանել է երթևեկելի մասի եզրին զուգահեռ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկները չեն կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.01.2021թ. թիվ 2112131931 որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 21.12.2020թ. ժամը 10:27-ին Երևան քաղաքի Սայաթ-Նովա-Չարենցիփողոցների խաչմերուկի հատվածում, մասնավորապես Չարենցի փողոցում կանգառ է կատարել երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ՝ 10:26:37-րդ վայրկյանից 10:27:56-

րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 79 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:


Այսպիսով, հիմնավորվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112131931 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.01.2021թ. թիվ 2112131931 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Լուսինե Խեղոյանին:

Կատարող՝ Ա.Եղիազարյան  
Հեռ. 011-544-978



*[Handwritten signature]*  
**Ե.Կարապետյան**